

Ե.

ԿՈՒՈՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՏՐԻԱՐԲ

Թաղուած է Կ. Պոլիս՝ Ղալաթիա, Ս. Լուսաւորիչ Եկեղեցին:

Ունի շիրիմ երկու մասէ բաղկացած, մին հորիզոնական որ կը ծածկէ Պատրիարքին գերեզմանը, միւսը՝ կանգուն՝ եկեղեցոյն որմին մէջ ազուցուած, որ ունի հետեւեալ ոսկեզօծ արձանագրութիւնը՝ 18 տող, որոնց սկզբնատառերը կը կազմեն Մականոն Կորտի. այսպէս.

Մառան շնորհաց Գանձ լուսաշաւիղ
Արհւոյն Յօհաննու վեհից շառաւիղ
Կրօնիւք մաքուր յԱմբրոսոյ մարգեալ
Աստ Բիւզանդիա գերագանց փայլեալ
Նախագուշակմամբ վերնոյն տեսութեամբ
Որ և Պատրիարգ ազդեալ ընտրութեամբ
Ի իւսեցեալ ի մեր Սրբոյն Յակոբայ
Նորին վճարեաց զպարտան գերակայ
Կնդրուկ կանոնաց բուրեաց քաղցրաշունչ
Որ յոխորտ հնչէր բամից հոմաշունչ
Լցեալ սիրաբաղձ ի յանենջ սըրտի
Որով կազդուրէր վէրս ունեցողի
Տեառնս ի պատիւ վէմն այս ուղղակի
Ի յորմն հաստեալ կայ ինքն առաջի:

Ի ներ քսան և հինգ ամաց

Պատրիարքութեան

Յամի տեառն 1741 Փետր. 13

Ըստ Հայոց ՌՃՂ:

Հրատարակուած է Կոլոտ Յովհաննէս Պատրիարքի կենսագրութեան մէջ (Վիէննա, Բարգէն ծ. վ. Կիւլէսէրեան):

Զ.

ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐԲ ՊԱՍՏՅԻ

Թաղուած է Պուրսայ, Հայոց եկեղեցոյն բակը. ասոր տապանագիրը հրատարակուած է երեք անգամ, նախ՝ Նիկոմիդիոյ Հայրեկապ թերթին մէջ (Թիւ 61, 15 Նոյմ. 1852), յետոյ Իզմիրի Արևիկեան Մամուլին մէջ (1903), և ապա Կ. Պոլսոյ Բիւզանդիոնին մէջ (Թիւ 3126, Դեկտ, 1906), և է այսպէս.

Ներ տապանիս քնով մահու ննջեալ
Որ ի կեանս այս արթուն հոգւով էր կեցեալ
Ներսէս արհի եպիսկոպոս քաղաքիս
Որ ի Պօլսէն մեծէ ընտրութեամբ էր սերեալ